

մանի. եւ յաւարտ ձայնի կականի ըստ նոյն փառք տուողին, եւ եզրակացութեամբ ըստ Անօթացոյ ողբերգող տեսանողին՝ գոհութիւն կամեցողին այնմ որ Իւրն է աշխարհ լրիւ իւրով եւ ամենայն բնակիչ: Զի ինքն վկայէ որ է ճշմարիտ. Լո՛ւր աստուածատեսդ, ես եմ Աստուած քո եւ ոչ ոք. ես սպանանեմ եւ ես կեցուցանեմ, աղքատացուցանեմ եւ ես մեծացուցանեմ. Զամուլն եօթնապատիկ ծնուցանեմ եւ զբազմածինն նուազեցուցանեմ. Զաղքատս յերկրէ յարուցանեմ եւ զտառապեալս յաղբեւաց բարձրացուցանեմ. Զուլն¹⁾ մեղաւորաց խորտակեմ եւ չարիք ի վերայ մեղաւորաց ածեմ. Արգարոց եւ հեզոց զերկիր ժառանգեցուցանեմ, փառաւորելով երկայն աւուրբք լցուցանեմ եւ զփրկութիւն (պարսպ): Վասն որոյ ըստ անօրէնութեան իմոյ հատուցաւ ինձ. Նետք Տեառն հարան յիս, չարչարացեալ մարմնով, չարդարացեալ. եւ այլն ամենայն մերկապարանոց գոն: Որք կայ առցեն բանքս ի հեծութեան սրտիս քեզ վաղեմի եւ անմիջոց սիրելութեանդ, զոր եւ շնորհաւորելով յարգեմ զբարեկամդ Աստուծոյ, որ ինձ է յոյժ մեծարելի եւ մասամբք ինձ երանութիւն յայսմ վայրի, զի ծանօթք իմ հաճոյ է Աստուծոյ: Եւ շնորհակալ եմ վասն յիշողութեանդ տոմսիւ, որպէս եւ միշտ անդստին սիրով հայիս ի քոյդ հեզութեան բարերարութենէդ առ սիրելին քո ի գութդ վստահացեալ եւ ի հաշտարար սուրբ յաղթմս քո յուսացեալ ԵՐԵՄԻԱՍ:

(Ձեռ. Թիւ 1058, քղ. 32ա-32բ)

1) զուլուն.